

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻՂԻՎԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Հանցագործության ռեցիդիվի հասկացության և տեսակների հարցը բավականին երկար ժամանակ մշակվել է քրեական իրավունքի տեսությունում: Չնայած դրան՝ ռեցիդիվի հետ կապված շատ հարցեր շարունակում են բաց մնալ, իսկ հետազոտողների շրջանում միասնական մոտեցումը ռեցիդիվի իրավական էության, դրա հասկացության և պարտադիր հատկանիշների վերաբերյալ բացակայում է:

Ռեցիդիվի օրենսդրական բնորոշումները մշտապես ընթացել են քրեական իրավունքի գիտության ազդեցության ներքո: Այսպես, քրեական իրավունքի դասական դպրոցը ռեցիդիվը դիտում էր որպես ծանրացնող հանգամանք, որը հանգեցնում էր անձի նկատմամբ նշանակվող պատժի խստացման: Այս դպրոցի ներկայացուցիչները շեշտը հանցավորի անձից տեղափոխում էին դեպի հանցավոր արարք և հետևանքներ, իսկ հանցավորության դեմ պայքարի միակ միջոցը համարում էին օրենսդրության կատարելագործումը: Պոզիտիվիստական դպրոցի ներկայացուցիչներն իրենց ուշադրությունը կենտրոնացնում էին հանցագործ-ռեցիդիվիստի անձնական բնութագրի վրա և գտնում էին, որ միայն հանցագործի անձի ամբողջական վերլուծությունն է թույլ տալիս որոշելու հասարակության համար նրա վտանգավորության բնույթն ու աստիճանը և նշանակելու համարժեք պատիժ:

Գործող ՀՀ քրեական օրենսգրքում տրված ռեցիդիվի բնորոշումն ավելի շատ հիմնված է դասական դպրոցի ավանդույթների վրա՝ ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի, որը տալիս էր ոչ թե երևույթի՝ ռեցիդիվի, այլ առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունը:

Հանցագործությունների ռեցիդիվը համակցության հետ միասին բազմակիության տեսակներ են և բնութագրվում են բազմակիությանը

¹ ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Ա. Հ. Գաբուզյան:

հատուկ այնպիսի հատկանիշով, ինչպիսին է միննույն անձի կողմից երկու կամ ավելի հանցագործությունների կատարումը: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 22 հոդվածի առաջին մասի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվը դիտավորությամբ հանցանք կատարելն է այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար:

Ռեցիդիվի օրենսդրական բնորոշումից երևում է, որ այն ներառում է երկու պարտադիր բնութագրիչ՝

ա) նախկինում կատարված դիտավորյալ հանցագործության համար դատվածության առկայություն,

բ) նոր դիտավորյալ հանցանքի կատարում:

Հետևաբար, անձի արարքում ռեցիդիվը գնահատելիս նախ և առաջ պետք է հավաստել վերը նշված պարտադիր հատկանիշների առկայությունը:

Դատվածության առկայությունը կամ բացակայությունն այն հիմնական չափանիշն է, որն ընկած է հանցագործությունների ռեցիդիվի և համակցության տարբերակման հիմքում: Դատվածությունն անձի յուրահատուկ իրավական դրությունն է՝ պայմանավորված դատարանի մեղադրական դատավճռով նրան որևէ հանցագործության համար պատժի դատապարտելու փաստով: Այդ իրավական դրության առանձնահատկությունն այն է, որ դատվածություն ունեցող անձի համար կարող են ծագել քրեաիրավական բնույթի բացասական հետևանքներ: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 2-րդ մասի համաձայն՝ դատվածությունը հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս:

Մեր կարծիքով դատվածությունը ռեցիդիվի գնահատման հարցում պարտադիր պայման դիտելն ունի կարևոր նշանակություն և վկայում է, որ հանցագործը, արդեն իսկ ենթարկված լինելով պետական հարկադրանքի միջոցի նախկինում կատարած հանցագործության համար, անհրաժեշտ դասեր չի քաղել և չի կանգնել ուղղման ճանապարհին, ինչն էլ նրա նկատմամբ ավելի խիստ պատիժ նշանակելու հիմք է: Մինչդեռ արդարացի չէր լինի նման բացասական վերաբերմունք դրսևորել և կատարվածը որպես հանցագործությունների ռեցիդիվ գնահատել այն անձի նկատմամբ, ով թեև կատարել է մեկից ավելի հանցանք, սակայն դրանցից որևէ մեկի համար չի դատապարտվել, քանի որ բացառված չէ հենց առաջին ներգործությունից

հետո հանցավորի՝ իր հակահասարակական կողմնորոշումներից ձերբազատվելու և այլևս նոր հանցանքներ չկատարելու հնարավորությունը:

Բավականին երկար ժամանակ քրեական իրավունքի գիտությունում շարունակում է վիճելի մնալ հանցագործի կողմից պատիժն ամբողջությամբ կամ մասամբ կրելու հանգամանքը որպես ռեցիդիվի առկայության գնահատման պարտադիր պայման դիտելը: Որոշ հեղինակներ կարծում են, որ հանցագործությունների ռեցիդիվն առկա է մեղադրական դատավճիռը հրապարակելուց, իսկ մյուսները՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հանցավորի կողմից նոր հանցանք կատարելու դեպքում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քրեական օրենսգրքով անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը:

Երրորդ խումբ հեղինակների կարծիքով ռեցիդիվի պարտադիր հատկանիշ է անձի կողմից պատիժն ամբողջությամբ² կամ մասնակիորեն³ կրելու փաստը: Ն. Ս. Տազանցը կարծում էր, որ պատիժը կամ առնվազն դրա 2/3 մասը կրած և կրկին հանցանք կատարած անձն ավելի վտանգավոր է, քան դեռևս պատիժ չկրած անձը⁴: Պատժի կրումը կոչված է ապահովելու հանցագործությունների ընդհանուր և անհատական կանխարգելումը: Հետևաբար, միայն պատիժն ամբողջական կրելուց հետո կամ դրա ընթացքում նոր հանցանքի կատարումն է վկայում անձի՝ ուղղվելու ցանկության բացակայության և նրա նկատմամբ կիրառված քրեախրավական ներգործության միջոցների անարդյունավետության մասին՝ ավելի խիստ պատիժ նշանակելու հիմք դառնալով:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 22-ի և 67.1-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ ռեցիդիվի գնահատումը կախվածության մեջ չի դրվում հանցավորի կողմից պատիժը փաստացի կրելու հանգամանքից: Այսինքն՝ մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, թեկուզև շատ կարճ ժամանակ անց, անձի կողմից նոր

² Ст' u Уголовное право РФ. Общая часть / Под ред. Р. П. Галиакбарова, 1997, էջ 18:

³ Ст' u Комментарий к Уголовному кодексу РФ / Отв. ред. А. И. Бойко. Ростов н/Д., 1996, էջ 75:

⁴ Ст' u Таганцев Н. С., О повторении преступлений. СПб. 1867, էջ 61:

հանցանք կատարելու դեպքում հանցագործությունների ռեցիդիվը պետք է առկա համարել:

Կարծում ենք ավելի նպատակահարմար կլինեն անձի արարքում ռեցիդիվը գնահատել և քրեական օրենսգրքի հոդված 67.1-ով սահմանված կարգով պատիժ նշանակել հանցավորի կողմից պատիժն ամբողջությամբ կրելուց հետո միայն նոր հանցանք կատարելու դեպքում, եթե դատվածությունը չի մարվել կամ հանվել: Վերոնշյալը թույլ կտար միմյանցից հստակորեն սահմանազատելու հանցագործությունների ռեցիդիվի և դատավճիռների համակցության դեպքում պատիժ նշանակելու ինքնուրույն կանոնները՝ բացառելով դրանց համակցված կիրառումը: Հակառակ պարագայում, մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև պատիժն ամբողջությամբ կրելը, անձի կողմից նոր հանցանքի կատարումը ՀՀ քրեական օրենսգրքի 67 և 67.1 հոդվածներով սահմանված պատիժ նշանակելու հատուկ կանոնների միաժամանակյա գործադրման հիմք է, ինչը կարող է հանգեցնել ոչ միայն հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատժի անհամաչափ խստացման, այլև պրակտիկայում դրանց կիրառման հարցում դժվարությունների և անհստակությունների առաջացման: Այս մոտեցումը բխում է նաև քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 1-ին մասով սահմանված այն պահանջից, որ հանցագործությունների ռեցիդիվի կանոններով պատիժ նշանակելիս դատարանը պարտավոր է, ի թիվս այլոց, հաշվի առնել այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար: Ակնհայտ է, որ խոսքը արդեն իսկ կրած պատժի մասին է:

Ինչ վերաբերում է ռեցիդիվի մյուս պարտադիր հատկանիշին՝ նախկինում և նոր կատարված հանցանքների դիտավորյալ բնույթին, ապա քրեական իրավունքի տեսության մեջ սա նույնպես միանշանակ չի ընդունվում: Որոշ հեղինակների կարծիքով ռեցիդիվի առկայությունը մեղքի ձևից կախվածության մեջ դնելը ճիշտ չէ, քանի որ օրենսդիրը հանցավոր է համարում ոչ միայն դիտավորյալ, այլև անզգույշ արարքները, հետևաբար, հասարակությունն անզգույշ հանցագործություններից ոչ պակաս պաշտպանության կարիք ունի, քան դիտավորյալ հանցանքներից: Մինչդեռ, ռեցիդիվի նախատեսումը միայն դիտավորյալ հանցանքների դեպքում բխում է անզուլուրյամբ

կատարվող հանցագործությունների թերագնահատումից⁵: Այսպես, անզգույշ հանցագործությունների մեծ մասը կատարվում է արտահայտված հակահասարակական կողմնորոշում ունեցող իրավախախտների կողմից, ովքեր իրավակարգի, սոցիալական արժեքների, այլոց իրավունքների և օրինական շահերի նկատմամբ ունեն բացահայտ արհամարհական, թեթևամիտ-անպատասխանատու վերաբերմունք:

Կարծում ենք վերոնշյալ դիրքորոշման հետ չի կարելի համաձայնվել, և օրենսդրի որդեգրած մոտեցումը՝ ռեցիդիվը գնահատելիս միայն դիտավորյալ հանցանքները հաշվի առնելու վերաբերյալ, ավելի ճիշտ է: Այսպես, հանցագործությունների ռեցիդիվը վկայում է հանցավորի գիտակցության մեջ կայուն և խոր արմատավորված հանցավոր հայացքների, սովորությունների, ձգտումների, հստակ արտահայտված հակահասարակական դիրքորոշումների մասին: Հանցավոր վարքագծի պարբերականությունը բացասաբար է անդրադառնում այլ անձանց, հատկապես երիտասարդության հոգեբանության վրա՝ նրանց մեջ առաջ բերելով անպատժելիության թյուր պատկերացումներ, նպաստելով բնակչության քրեականացմանը, որով էլ պայմանավորվում է պատիժ նշանակելու հատուկ կանոնների նախատեսումը: Հանցագործությունների ռեցիդիվի վերոնշյալ իրավական բնութագիրը վկայում է միայն դիտավորյալ մեղքի ձևի առկայության մասին, իսկ անզգույշ հանցագործություններն ավելի շատ իրավիճակային բնույթ ունեն, չեն վկայում հանցավորի խոր և կայուն հանցավոր կողմնորոշումների մասին:

Հարկ է նշել, որ նախկինում դիտավորյալ հանցագործության համար դատվածություն ունեցող անձի կողմից նոր դիտավորյալ հանցանքի կատարումը ոչ բոլոր դեպքերում է համարվում հանցագործությունների ռեցիդիվ: Մասնավորապես, քրեական օրենսգրքի հոդված 22-ի 4-րդ մասի համաձայն՝ այն հանցանքների համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի

⁵ St'u **Агаев И. Б.**, Рецидив в системе множественности преступлений. М., 2002, էջ 24-25; **Кафаров Т. М.**, Проблема рецидива в советском уголовном праве. Баку, 1972, էջ 27, **Зелинский А. Ф.**, Рецидив преступлений. Харьков, 1980, էջ 9-10; **Красиков Ю. А.**, Множественность преступлений: Учебное пособие. М., 1988, էջ 31-32; **Куринов Б. А.**, Научные основы квалификации преступлений. М., 1984, էջ 163:

տասնութ տարին լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ ռեցիդիվը գնահատելու հարցում հանցագործության տեսակով պայմանավորված որևէ սահմանափակում չի նախատեսվում: Այսինքն՝ հանցագործությունների ռեցիդիվը հավասարապես առկա է նախկինում կատարված ոչ մեծ, միջին, ծանրության և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատվածությունն ունենալու դեպքում:

Կարծում ենք նման կարգավորումը չի բխում արդարության և մարդասիրության սկզբունքների պահանջներից, և ճիշտ կլիներ ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատվածությունը հաշվի չառնել ռեցիդիվը գնահատելիս: Այսպես, հայտնի է, որ հանցագործությունների դասակարգման հիմքում ընկած են կատարված արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը: Ոչ մեծ ծանրության հանցագործություններն իրենցից համեմատաբար նվազ վտանգավորություն են ներկայացնում: Վերոնշյալով պայմանավորված՝ օրենսդիրը դրանց համար որպես պատիժ նախատեսում է ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ ազատազրկման հետ կապ չունեցող պատժատեսակ: Մինչդեռ, հանցագործությունների ռեցիդիվը արտահայտվում է անձի իրավունքների էական սահմանափակմամբ՝ հանգեցնելով օրենքով նախատեսված հիմքերի և սահմանների շրջանակներում անձի նկատմամբ նշանակվող պատժի խստացման և բացասական այլ հետևանքների: Ասվածի համատեքստում գնահատելով ոչ մեծ ծանրության հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը՝ կարծում ենք՝ դրանց դեպքում հանցագործությունների ռեցիդիվի կանոնների կիրառումը կհանգեցնի անձի իրավունքների անհամաչափ սահմանափակման:

Այս առումով առավել հիմնավորված է թվում Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում դրսևորված մոտեցումը, ըստ որի՝ հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում ոչ մեծ ծանրության հանցագործությունների դատվածությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվը դասակարգվում է վտանգավոր և առանձնա-

պես վտանգավոր տեսակների: Մասնավորապես, հիշյալ հողվածի երկրորդ մասում տրվում է վտանգավոր, իսկ երրորդ մասում՝ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի հասկացությունները: Դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ ռեցիդիվի տեսակների տարբերակման հիմքում ընկած է ինչպես հանցագործությունների ծանրությունը, այնպես էլ ազատագրկման դատապարտված լինելու հանգամանքը: Ընդ որում, հասարակ ռեցիդիվն առկա է ոչ միայն նախկինում մեկ, այլ նաև երկու կամ ավելի դիտավորյալ հանցագործությունների համար դատվածության դեպքում, եթե նման դեպքերն օրենքով չեն համարվում վտանգավոր կամ առանձնապես վտանգավոր ռեցիդիվ, այսինքն՝ երբ անձը նախկինում երկու կամ ավելի հանցագործությունների համար դատապարտված է լինում ազատագրկման հետ չկապված պատժի⁶: Մակայն ազատագրկման դատապարտված լինելու հանգամանքը ներկայիս կարգավորման պայմաններում ոչ միշտ է հնարավոր համարել ռեցիդիվի և դրա տեսակների սահմանազատման չափանիշ: Այսպես, 22 հողվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվը վտանգավոր է համարվում դիտավորությանը հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում երկու անգամից ոչ պակաս ազատագրկման է դատապարտվել դիտավորյալ հանցագործության համար: Մտացվում է, որ եթե անձը նախկինում մեկ անգամ է ազատագրկման դատապարտվել, կատարվածը չի կարող գնահատվել վտանգավոր ռեցիդիվ, այլ պետք է դիտել հասարակ ռեցիդիվ՝ չնայած որ առկա է ազատագրկման դատապարտված լինելու հանգամանքը:

Խնդիրներ են առաջանում նաև ռեցիդիվի առանձնապես վտանգավոր տեսակի որոշման հարցում: Մասնավորապես, քննարկվող հողվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվն առանձնապես վտանգավոր է համարվում անձի կողմից դիտավորությանը այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որի համար նա դատապարտվում է ազատագրկման, եթե անձը նախկինում երեք անգամից ոչ պակաս ցանկացած հաջորդականությամբ ազատագրկման է դատապարտվել միջին ծանրության դիտավորյալ հանցագործության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար: Վերոնշյալ ձևակերպման պայմաններում պարզ չէ, թե ռեցի-

⁶ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Երևան, 2012 թ., էջ 313:

դիվի այս տեսակի գնահատման համար անձը նախկինում պետք է անպայման դատվածություն ունենա հանցագործությունների բոլոր երեք տեսակների համար՝ միջին ծանրության, ծանր, առանձնապես ծանր, թե բավական է դրանցից միայն մեկ տեսակի համար երեք անգամ դատվածություն ունենալու հանգամանքը, օրինակ՝ երեք անգամ միջին ծանրության կամ մեկ միջին ծանրության և երկու ծանր և այլն: Մի կողմից հանցագործությունների տեսակները միմյանցից անջատված են «կամ» շաղկապով, ինչը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 10-րդ մասի համաձայն ենթադրում է, որ բոլոր թվարկված պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, մյուս կողմից՝ օգտագործվում է «ցանկացած հաջորդականություն» արտահայտությունը, որը վկայում է թվարկված հանցագործությունների բոլոր երեք տեսակների պարտադիր առկայության վերաբերյալ օրենսդրի արտահայտած կամքի մասին:

Ակնհայտ է, որ այսպիսի կարգավորումը չի համապատասխանում իրավական որոշակիության չափանիշներին, ինչ ՀՀ քրեական օրենսգրքով երաշխավորված օրինականության սկզբունքի խախտում է: Ընդհանրապես դասակարգման հիմքում ոչ մի հստակ տրամաբանություն, միասնական չափանիշ չկա, դասակարգումը խրթին է, անիմաստ, ինչը պրակտիկայում դրանց կիրառման հարցում բազմաթիվ խնդիրներ է առաջացնում և որևէ գործնական օգուտ չի տալիս: Հարկ է նշել, որ շատ երկրների քրեական օրենսդրություններում ռեցիդիվի դասակարգում ընդհանրապես չի իրականացվում, և ռեցիդիվը պարզապես նախատեսվում է որպես ծանրացնող հանգամանք: Այսպես, Սլովենիայի, Սլովակիայի, Լատվիայի, Էստոնիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի և այլ եվրոպական երկրների օրենսդրությամբ ռեցիդիվը տեսակների չի դասակարգվում, և դրա առկայությունը դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք: Ընդ որում, որոշ պետություններում հստակ նախատեսված են պատժի խստացման որոշակի սահմաններ, իսկ որոշ երկրներում այն թողնված է դատարանի հայեցողությանը:

Վերոշարադրյալը հաշվի առնելով՝ կարծում ենք պետք է հրաժարվել ռեցիդիվը տեսակների դասակարգելուց, և այն պարզապես նախատեսել որպես պատիժը ծանրացնող հանգամանք՝ պատժի պարտադիր խստացում նախատեսելով միայն այն դեպքում, երբ անձը նախկինում ազատազրկման ձևով պատիժ է կրել և դատվածությո-

յունը դեռևս չհանված կամ չմարած կատարել է այնպիսի դիտավորյալ հանցանք, որի համար ազատագրկման է դատապարտվում: Այս դիրքորոշումը բխում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգում առկա ռեցիդիվի կարգավորմանն ուղղված հայեցակարգային մոտեցումներից:

Ամփոփելով վերը նշվածը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ը շարադրել հետևյալ կերպ՝

1. Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում պատիժը կրելուց դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար:

2. Հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատվածությունը, այն հանցագործության համար դատվածությունը, որը կատարվել է մինչև անձի 18 տարին լրանալը, ինչպես նաև այն դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով:

Կարծում ենք, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները կարող են նպաստել ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարի արդյունավետությանը:

Женя Степанян
Аспирант кафедры уголовного права ЕГУ

ПОНЯТИЕ РЕЦИДИВА И ЕГО ВИДЫ

В статье рассмотрены спорные вопросы связанные с понятием рецидива и его видов, выявлены недостатки и пробелы действующего законодательства. На основе сравнительного анализа регулирования вопросов рецидива в уголовных кодексах ряда зарубежных стран, были сделаны соответствующие предложения, которые будут способствовать устранению существующих недостатков в УК РА и росту эффективности борьбы с рецидивной преступностью.

Zhenya Stepanyan
PhD student of the YSU Chair of Criminal Law

THE CONCEPT OF RECIDIVISM AND ITS TYPES

The article deals with controversial issues related to the concept of recidivism and its types, shortcomings and gaps of existing legislation are identified. It was also studied the regulation of recidivism in the criminal codes of some foreign countries, and appropriate proposals were made, which will contribute to eliminating the existing gaps and increase efficiency in the struggle against recidivism.

Բանալի բառեր՝ *քեցիղիվ, հանցագործություն, պատիժ, մեղք, դատվածություն, դիտավորություն, անգրուշություն, դատավճիռ:*

Ключевые слова: *рецидив, преступление, наказание, вина, судимость, умысел, неосторожность, приговор.*

Key words: *recidivism, crime, punishment, guilt, previous conviction, intention, negligence, sentence.*